Ընտրություններ հավերժության համար, Մաս 2

Երկրորդ՝ իմացեք ճշմարտությունը այն մասին, թե ինչ են ձեզ առաջարկել Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը:

Կարճ ասած, նրանք ձեզ առաջարկել են ամեն ինչ:

Իր զավակների համար Երկնային Հոր Ծրագիրը թույլ է տալիս մեզ ապրել այնտեղ, որտեղ Նա է ապրում և ապրել այնպես, ինչպես Նա է ապրում՝ ի վերջո, ավելի ու ավելի նմանվելով Իրեն: Նրա Ծրագիրը բառացիորեն մեզ տալիս է ողջ հավերժության ամենաառատ օրհնությունները, այդ թվում՝ «Քրիստոսի հետ ժառանգակիցներ» դառնալու հնարավորությունը [Հռոմեացիներին 8.17]:

Աստված ամենագետ և ամենատես է: Ամբողջ հավերժության ընթացքում ոչ ոք երբեք չի ճանաչի ձեզ և չի հոգա ձեր մասին ավելի շատ, քան Նա: Ոչ ոք երբեք ձեզ ավելի մոտ չի լինի, քան Նա: Դուք կարող եք հեղել ձեր սիրտը Նրա առաջ և վստահ լինել, որ Նա կուղարկի Սուրբ Հոգուն և հրեշտակներին՝ հոգ տանելու ձեր մասին: Նա ցույց տվեց Իր մեծագույն սերը, երբ ուղարկեց Իր Միածին Որդուն, որ մեռնի ձեզ համար՝ լինելով ձեր Փրկիչն ու ձեր Քավիչը:

Իր Քավության միջոցով Տեր Հիսուս Քրիստոսը հաղթեց աշխարհին [տես Հովհաննես 16.33, Վարդապետություն և Ուխտեր 50.41]: Հետևաբար, Նա «զորեղ է . . . ձեզ ամեն անարդարությունից մաքրելու» [Ալմա 7.14]: Նա կազատի ձեզ ամենադաժան փորձություններից՝ Իր ուրույն ձևով և Իր ուրույն ժամանակին: Երբ դուք հավատքով մոտենաք Նրան, Նա կառաջնորդի, կպահպանի և կպաշտպանի ձեզ: Նա կբուժի ձեր կոտրված սիրտը և կմխիթարի ձեզ ձեր նեղության մեջ [տես Ղուկաս 4.18; Ալմա 7.10–12]: Նա ձեզ հնարավորություն կտա ստանալ Իր զորությունը: Եվ Նա ձեր կյանքում հնարավոր կդարձնի անհնարինը: . . .

Աստված առանձնահատուկ սեր է տածում բոլոր այն մարդկանց հանդեպ, որոնք Իր հետ ուխտ են կապում մկրտության ջրերում: Եվ այդ աստվածային սերն աճում է, երբ լրացուցիչ ուխտեր են կնքվում և հավատարմորեն պահվում: Այնուհետև՝ մահկանացու կյանքի ավարտին, մեր Երկնային Հոր հետ յուրաքանչյուր ուխտի զավակի վերամիավորումը արժեքավոր է դառնում [տես Սաղմոս 116.15]:

Նաև, Նա *խորապես* հոգ է տանում, որ Իր բոլոր զավակները հնարավորություն ունենան լսելու վերականգնված ավետարանի ավետիքը: Երկնային Հայրն Իր զավակներին երկիր է ուղարկել ավելի քան վեց հազարամյակների ընթացքում: Այդ մարդկանցից շատերը դեռ չեն ստացել այն արարողությունները, որոնք նրանց կարժանացնեն հավերժական կյանքին: Այդ իսկ պատճառով տաճարներն այդքան կարևոր են: Դա է պատճառը, որ վարագույրի երկու կողմում Իսրայելի հավաքումը այսօր Երկրի վրա կատարվող *կարևորագույն* աշխատանքն է: Դուք՝ իմ սիրելի գործընկերներ այս սուրբ գործում, էական դերակատարում ունեք այս հավաքման գործում, և ես շնորհակալ եմ ձեզ դրա համար: (Ռասսել Մ. Նելսոն, «Ընտրություններ հավերժության համար» [համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, 15 մայիսի, 2022], broadcasts.ChurchofJesusChrist.org)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_544_handout-2